ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 26.02.2013թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Սիմոնյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Ռ. Մանուչարյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուի Երևանի 311մ բարձրության հեռուստաաշտարակի Kleemann TRACTION MR մակնիշի վերելակի տեխնիկական սպասարկում, այսուհետ՝ «Ծառայություն»: Ծառայությունն իր մեջ ներառում է.

ա) վերելակի անխափան աշխատանքի ապահովում,

բ) Պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցով վերելակի կանխարգելիչ աշխատանքների իրականացում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը՝

2.1.1.Վերելակի անսարքությունները վերացնում է Պատվիրատուի կողմից ստացած հայտերի հիման վրա.

2.1.2.Կախված աշխատանքի բարդությունից՝ ինքնուրույն որոշում է հայտերի կատարման ժամկետները:

2.1.3. Ինքնուրույն որոշում է Ծառայության մատուցման համար անհրաժեշտ մասնագետների քանակը և նախապես Պատվիրատուին է ներկայացնում սպասարկող անձնակազմի ցանկը:

2.1.4. Իրավունք ունի, անհրաժեշտության դեպքում, սույն պայմանագրի պարտավորությունների կատարման համար ներգրավել երրորդ անձանց:

2.1.5.Կարող է դադարեցնել Ծառայության մատուցումը, եթե Կատարողը խախտել է սույն պայմանագրի 4.2 կետը:

2.1.6. Վերելակի սպասարկման և նորոգման աշխատանքները իրականացնում է .

ա/ երաշխիքային մեկամյա ժամկետի ընթացքում՝ անվճար, բացառությամբ գործարանային թերությունների հետ չկապված վերելակի վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի և վերանորոգման աշխատանքների գումարի:

բ/ ետերաշխիքային ժամկետի ընթացքում սպասարկման համար անհրաժեշտ նյութերի (մաքրող նյութեր և քսանյութեր) ձեռք բերումը՝ իր միջոցների հաշվին, պահեստամասերը՝ Պատվիրատուի հաշվին:

2.2. Պատվիրատուն՝

2.2.1. Մատուցված Ծառայության համար վճարում է սույն պայմանագրի 4-րդ կետում նախատեսված կարգով:

2.2.2. Վերելակի անսարքությունների վերացման համար Կատարողին ներկայացնում է հայտեր:

2.2.3.Վերելակի տեխնիկական սպասարկման տարածքում ապահովում է անհրաժեշտ աշխատանքային պայմաններ:

2.3. Եթե Կատարողի կողմից հայտնաբերվում են խնդիրներ, առանց դրանց լուծման անհնարին է դառնում վերելակի պատշաճ շահագործումը, ապա Պատվիրատուն պարտավոր է դադարեցնել վերելակի շահագործումը, մինչ նշված խնդիրների վերացումը, հակառակ դեպքում Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում առաջացած հետևանքների համար:

3. Ծառայության հանձնման-ընդունման կարգը

3.1.Ծառայությունը մատուցելուց հետո Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է մատուցված ծառայությունների կատարման ակտ:

3.2. Ակտում նշվում են մատուցված ծառայությունների անվանացանկը և արժեքը:

3.3. Ակտում կարող են ներառվել ցանկացած այլ տեղեկություն, որոնց մասին Կողմերը անհրաժեշտ կհամարեն նշել:

4. Ծառայության գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրով մատուցվող Ծառայության համար ամսական պայմանագրային գին է սահմանվում 120 000 (հարյուր քսան հազար) դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն (Հավելված 1):

4.2. Վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս, Կատարողի կողմից ներկայացրած հաշիվ-ապրանքագրի համաձայն, այն ստանալուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:

4.3. Վերելակների վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի, վերանորոգման աշխատանքների գումարները Պատվիրատուն փոխանցում է Կատարողի հաշվարկային հաշվին նախապես՝ վերջինիս կողմից նախահաշիվը ստանալուց հետո 10 /տաս/ աշխատանքային օրվա ընթացքում:

4.4.Սույն պայմանագրի 4.2 կետով սահմանված վճարման ժամկետի խախտման համար Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ պայմանագրի գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է 12 (տասներկու) տարի ժամկետով: Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունը Կատարողը սկսում է մատուցել վերելակը Պատվիրատուին հանձնելու և երաշխիքը տրամադրելու պահից:

5.2.Պատվիրատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելու դեպքում Կատարողի կողմից տրված երաշխիքային ժամկետը դադարում է:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի համաձայնությամբ՝ բացառությամբ սույն պայմանագրով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի գինը Կատարողի կողմից կարող է վերանայվել տարեկան մեկ անգամ: Պայմանագրային գնի բարձրացումը չի կարող գերազանցել պայմանագրային գնի 20%-ը:

7.2.Սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված ժամկետից շուտ պայմանագիրը լուծելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել տույժ մնացած ժամանակահատվածի համար Պատվիրատուի կողմից Կատարողին սպասարկման համար վճարման ենթակա գումարի չափով, բացառությամբ սույն պայմանագրով սահմանված կարգով Կատարողի կողմից տեխնիկական սպասարկման ծառայություններ չմատուցելու հիմքով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքի:

7.3. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95	ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 5
ԱՇԻԲ «Աղասյան» մասնաճյուղ	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/հ 247460117994	Հ/հ 21700001-132794-001
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 00847479
Պատվիրատուի կողմից	Կատարողի կողմից
Ա. Սիմոնյան	*Ռ. Մանուչարյան*

Հավելված 1

26.02.2013թ. Տեխնիկական սպասարկման
ծառայության մատուցման պայմանագրի

Վերելակի մոդելը	կանգառների քանակը	սպասարկման իրականացման հաճախականությունը	սպասարկման տևողությունը (ժամ)	սպասարկման արժեքը, առանց ԱԱՀ (դրամ)	ընդամենը վճարման ենթակա գումարը, ներառյալ ԱԱՀ-ն (դրամ)
Kleeman TRACTION MR	10	ամիսը մեկ անգամ	5	100 000	120 000

Պատվիրատու

ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95
ԱՇԻԲ «Աղասյան» մասնաճյուղ
Հ/հ 247460117994
ՀՎՀՀ 01501898

Պատվիրատուի կողմից

Ա. Սիմոնյան

Կատարող

ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 5
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/հ 21700001-132794-001
ՀՎՀՀ 00847479

Կատարողի կողմից

Ռ. Մանուչարյան